



## Շշի օգտագործման և պահեստավորման ուղեցույց

Շիշը դիսպենսեր սարքի վրա տեղադրելուց առաջ անհրաժեշտ է.

- Մաքրել խոնավ շորով՝ հատկապես խցանի և շշի վերևի հատվածը, որպեսզի դիսպենսերի ձողի հետ շփման մասերը փոշոտ չլինեն,
- Խցանի վրայից հեռացնել բոլոր պաշտպանիչ թաղանթները և թղթերը:

**Որպես արտաքին ախտահանիչ միջոց խորհուրդ ենք տալիս օգտագործել CoolSanit-ը:**

Դիսպենսեր սարքի վրա տեղադրված շիշը խորհուրդ է տրվում.

- սպառել տեղադրելուց հետո 25 օրվա ընթացքում,
- պաշտպանել շիշը և դիսպենսերը արևի ուղիղ ճառագայթներից:

Ձուրը վերջանալուն պես՝ մինչև նոր շշի տեղադրումը, անհրաժեշտ է դիսպենսերն անջատել հոսանքից՝ անսարքությունից խուսափելու համար:

Խորհուրդ է տրվում դիսպենսերի շիշը փոխել այն պահին, երբ դեռ շշի մեջ կա մի փոքր ջուր, որպեսզի դիսպենսերի բաքերը միշտ լիքը լինեն. դա կխոչընդոտի բաքերի մեջ սենյակի օդի ներթափանցմանը, հետևաբար և բաքի մեջ փոշի լվցելուն:

Օգտագործելուց հետո խնդրում ենք շիշը մաքուր պահել և արևի ճառագայթներից հեռու (հակառակ դեպքում մնացորդային ջրում կարող են մանրէներ զարգանալ, որի հետևանքով շիշը կկանաչի, և ստիպված կլինենք խոտանել այն):

